

## Քաղվածք

### Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության խորհրդի նիստի թիվ 1 արձանագրությունից

2017 թ. մարտի 15-ին ժամը 18:00 Վարդանանց նորարարական բժշկության կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության խորհրդի նիստը հետևյալ օրակարգով.

1. Ընտրություններից հետո կատարված և կատարվելիք աշխատանքների ներկայացում
2. Միության համացանցային նոր կայքի ներկայացում
3. Միության համացանցային կայքի հասցեի քննարկում
4. Անդամավճարների չափերի որոշում
5. 2017 թ. անդամավճարների վճարման կարգի քննարկում
6. Միության անդամների արտոնությունների և դրանցից օգտվելու կարգի քննարկում
7. Միության անդամության վկայականների տրամադրման հարցի քննարկում
8. Տարբեր հանձնաժողովների ստեղծման քննարկում
9. Առաջարկություններ հետագա աշխատանքների վերաբերյալ
10. Խորհրդի որոշումների հրապարակայնության հարցի քննարկում
11. Կլինիկական ուղեցույցների օրինակելի նմուշի քննարկում
12. Այլ հարցերի քննարկում ըստ անհրաժեշտության

Նիստին մասնակցում էին միության խորհրդի բոլոր անդամները: Ըստ օրակարգի կետերի տեղի ունեցան համապատասխան քննարկումներ, որոնց արդյունքում կայացվեցին հետևյալ **որոշումները**:

1. Հավանություն տրվեց ընտրություններից հետո կատարված և կատարվելիք աշխատանքներին
2. Հավանություն տրվեց միության համացանցային նոր կայքի տեսքին և բովանդակությանը և որոշվեց այն հրապարակել:
3. Որոշվեց համացանցային կայքի նոր հասցեն՝ [www.armanest.am](http://www.armanest.am), որի գրանցումից հետո կայքը հասանելի կլինի նշված հասցեով:
4. Որոշվեց 2017 թ. համար անդամավճարների չափը թողնել անփոփոխ անդամության բոլոր տեսակների համար՝ 6000 դրամ: Տարեվերջին, ըստ միության գործունեության և համապատասխանաբար միության ֆինանսական միջոցների օգտագործման՝ անդամավճարների հարցը կվերանայվի միության խորհրդի կողմից, և ըստ միության կանոնադրության անդամավճարների փոփոխությունների անհրաժեշտության դեպքում դրանք կներկայացվեն միության Ընդհանուր Ժողովի հաստատմանը:
5. Միության անդամների համար նախատեսված արտոնություններից այս տարվա ընթացքում օգտվելու համար որոշվեց 2017 թ. անդամավճարների վճարման վերջին ժամկետ սահմանել մինչև 2017 թ. մայիսի 31-ը ներառյալ: Այս ժամկետից

հետո անդամավճարի վճարման դեպքում անդամները չեն կարող օգտվել սահմանված արտոնություններից:

6. Որոշվեցին միության անդամների հետևյալ արտոնությունները.
  - աշխատանքային գործունեության ընթացքում ծագած խնդիրների քննարկում, վերլուծություն, անհրաժեշտության դեպքում եզրակացության տրամադրում
  - միության կողմից կազմակերպված դասընթացներին և գիտաժողովներին մասնակցության գեղջ
  - գիտական հոդվածների հայկական ամսագրերում տպագրման հովանավորություն (հոդվածի ուսումնասիրությունից հետո)

Արտոնությունների նշված ցանկը ենթակա է հետագա լրացման:

7. Որոշվեց միության անդամներին անդամության վկայականներ չտրամադրել՝ համարելով այն աննպատակահարմար:
8. Ըստ միության գործունեության տարբեր ոլորտների որոշվեց ստեղծել հետևյալ հանձնախմբերը և պաշտոնները, որոնց համար ընտրվեցին համապատասխան ղեկավարներ.
  - Իրավական հարցերի հանձնախումբ, ղեկավար՝ Լ. Մ. Գաբրիելյան
  - Ուղեցույցների և գործելակարգերի մշակման հանձնախումբ, ղեկավար՝ Հ. Ն. Մանգոյան
  - Գիտական հանձնախումբ, ղեկավար՝ Ի. Է. Մալխասյան
  - Գիտաժողովների և դասընթացների կազմակերպման հանձնախումբ, ղեկավար՝ Ա. Վարոսյան

Հանձնախմբերի ղեկավարներին հանձնարարվեց մշակել աշխատանքային գործունեության ծրագրեր և ձևավորել համապատասխան թիմեր գործունեության ծավալման համար:

9. Միության գործունեության ավելի արդյունավետ կազմակերպման նպատակով առաջարկվեց ընտրել միության գանձապետ և քարտուղար.
  - Որոշվեց միության գանձապետի գործառույթները հանձնարարել խորհրդի անդամ Ա. Չերքեզյանին,
  - Որոշվեց միության քարտուղարի պաշտոնի համար ընտրել միության անդամներից համապատասխան մասնագետ, որը կստանանի տվյալ գործառույթը խորհրդի կողմից հաստատվելուց հետո:
10. Խորհրդի աշխատանքների հրապարակայնության հարցի վերաբերյալ որոշում կայացվեց խորհրդի նիստերի արձանագրությունների քաղվածքները հրապարակել միության կայքում:
11. Ներկայացվեց կլինիկական ուղեցույցների և հիվանդների վարման գործելակարգերի մշակման կարգը, որոշվեց բոլոր նման փաստաթղթերը մշակել համաձայն ներկայացված կարգի:
12. Խորհրդի հաջորդ նիստը կկայանա ըստ խնդիրների հասունացման, որի մասին կհայտարարվի ավելի ուշ: